

ՀՆԴԵՎՈՐՈՊԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐՋԱՀԱՆԳ
ՁԱՅՆԱԿՈՐՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ *

ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Բանալի բառեր՝ հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ ձայնավորներ, թեք հիմքակազմիչ մասնիկներ, թեք հոլովներ, անվանական հոլովում, հոլովական վերջավորություններ, հին հայերեն, միջին հայերեն, վերջիններս վանկ, ուժղնության շեշտ, ձևաբանական վերլուծություն, սկզբունքներ, ուղղական, հայցական:

Նախաբան

Հայտնի է, որ նախագրային հայերենում վերջիններիս վանկային ուժղնության շեշտը հանդեպ է վերջնականային ձայնավորի թուլացման՝ ձայնորդահանգ փակ վանկերի դեպքում, և անկման՝ մնացած դեպքերում, թեև այդ գործընթացի որոշ մանրամասներ վիճահարույց են¹: Եվ քանի որ դեռևս վերջիններս շեշտի առկայությունը ժամանակ թեք հոլովները եզակի ուղղականի համեմատությամբ ընդհանուր առմամբ մեկ վանկով ավելի էին², ուստի շեշտահարող վանկերի թուլացման և/կամ սղման արդյունքում հայերենում ձևավորվել է վերջնականային շարժական շեշտ. հմմտ. եզ. ուղղ. *ղո՛ւտիր > հ. հայ. ու՛լատր, եզ. սեռ. *ղուտո՛ւր > *ղուտո՛ւր > հ. հայ. ուտո՛ւր, եզ. ուղղ. *մա՛րդո > հ. հայ. մա՛րդ, եզ. սեռ. *մարդո՛յ > հ. հայ. մարդո՛յ և այլն: Միևնույն ժամանակ շեշտահարող վերջնականների թուլացումը և/կամ սղումը նաև ձևաբանական կարևոր հետևանք է ունեցել սկզբնական թեքություններն ու հիմքի վերջահանգ ձայնավորները եզակի ուղղականում և հայցականում ընկել են հանդեպներով այդ երկու հոլովների նույնաձևացմանը, բայց պահպանվել են թեք հոլովներում, այնպես, որ եզակի ուղղական-հայցականը հին հայերենում իբրև ուղիղ հոլովական հիմք ու ելակետային ձև է ծառայում թեք հոլովական հիմք(եր)ի և մնացած

* Ներկայացվել է 21. XI. 2020 թ., գրախոսվել է 11. I. 2021 թ., ընդունվել է տպագրության 05. III. 2021 թ.:

¹ Տե՛ս A. Meillet. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique (այսուհետ՝ Esquisse...), 2nde éd. Vienne, 1936, pp. 55–59, R. Godel. An Introduction to the Study of Classical Armenian. Wiesbaden, 1975, pp. 99–106: Բայց հմմտ. Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 150–159:

² Դա մասամբ հայերենում նախադեզվյան սկզբնական դրուկյան օրինաչափ հնչյունական զարգացման, մասամբ էլ համարանական–ձևաբանական փոփոխությունների արդյունք էր (հմմտ. J. Matzinger. Untersuchungen zum altarmenischen Nomen: Die Flexion des Substantivs. Dettelbach, 2005, S. 85–145):

Հոլովների կազմության համար: Ըստ այդմ՝ հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ ձայնավորները, որոնք սկզբնապես հանդես էին գալիս բոլոր հոլովներում, հին հայերենում, ըստ էության, թեք հիմքակազմիչ մասնիկների դեր են կատարում: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, այդ ձայնավորների հինհայերենյան ձևաբանական կարգավիճակի վերաբերյալ հայերենագիտության մեջ միասնականություն գոյություն չունի:

Առկա տեսակետների քննական վերլուծություն

Հայ քերականագետներն ավանդաբար տարբերակում են երկու տիպի հոլովական մասնիկներ՝ հոլովիչներ և հոլովակերտներ: Հոլովիչները (ա, ե, ի, ո, ու) հոլովումների տարբերիչներ են, որոնցով որոշվում է բառերի հոլովական տիպը, իսկ հոլովակերտներն առանձին հոլովաձևերի կազմիչներ են: Հոլովիչն ավելանում է եզակի ուղղականի ձևին կա՛մ վերջից, կա՛մ վերջահանգ երկու բաղաձայնի (բաղաձայնի և ձայնորդի) միջև: Ուստի, ըստ հոլովիչի դիրքի, առանձնացնում են արտաքին (վերջաղրական, վերջամասնիկավոր) և ներքին (ներդրական, միջմասնիկավոր) հոլովումներ: Բացի այդ, տարբերակում են նաև պարզ և խառն հոլովումներ՝ կախված այն բանից, արդյոք տվյալ հոլովիչն անփոփոխ պահպանվում է ողջ հարացույցում, թե եզակի գործիականում և հոգնակի թվի թեք հոլովներում հերթագայվում է մեկ այլ հոլովիչի հետ³: Սակայն հոլովակազմության ավանդական նկարագրությունից կարելի է տեսնել, որ հոլովիչները դիտվում են ոչ միայն իբրև հոլովական տիպերի տարբերիչներ, այլև՝ եզակի սեռական-տրականի կազմիչներ: Այսպես, նշվում է, որ եզակի սեռականը և տրականը հիմնականում կազմվում են առանց հոլովակերտի՝ եզակի ուղղականի ձևին հոլովիչի ավելացմամբ: Մյուս կողմից՝ հոգնակի ուղղականը և հայցականը կազմվում են առանց հոլովիչի՝ համապատասխանաբար -ք և -ս հոլովակերտների ավելացմամբ, իսկ մի շարք հոլովներ էլ (օր.՝ եզակի և հոգնակի գործիականը, հոգնակի սեռական-տրական-բացառականը) կազմվում են միաժամանակ հոլովիչի ու հոլովակերտի մասնակցությամբ⁴: Այդ պարագայում կարող է տպավորություն ստեղծվել, թե հոլովիչները և հոլովակերտները հոլովաձևերի կազմության հարցում գրեթե նույնպիսի ձևաբանական դեր ունեն: Այսինքն՝ որոշ հոլովներ կազմվում են միայն հոլովիչով (հմմտ. եզ. սեռ.-տր. բան-ի), ուրիշները՝ միայն հոլովակերտով (հմմտ. հոգ. ուղղ. բան-ք, հոգ. հայց. բան-ս), իսկ որոշ հոլովներ էլ բնութագրվում են թե՛ հոլովիչի և թե՛ հոլովակերտի առկայությամբ (հմմտ. եզ. գործ. բան-ի-ւ, հոգ. սեռ.-տր.-բաց. բան-ի-ց): Բայց այդ տրամաբանությունը այնքան էլ պարզ չէ, թե հոլովակազմիչ դերը ինչպե՛ս է բաշխվում հոլովիչի և հոլովակերտի միջև վերջիններիս միաժամանակյա առկայության դեպքում: Արդ, թեև հայ քերականա-

³ Տե՛ս Ա. Աբրահամյան. Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1976, էջ 17–24, Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան. Գրաբարի ձևաբանություն, Երևան, 2007, էջ 47–51: Հմմտ. նաև Ա. Բագրատունի. Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 8:

⁴ Հմմտ. Ա. Բագրատունի. նշվ. աշխ., էջ 8, Ա. Աբրահամյան. նշվ. աշխ., էջ 19–24, Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան. նշվ. աշխ., էջ 48–51:

գիտության մեջ երկու տիպի հոլովական մասնիկներ են տարբերակվում, բայց լիովին չի հստակեցվում հոլովիչների ձևաբանական կարգավիճակը հոլովակազմության հարցում:

Գ. Զահուկյանի և Է. Թումանյանի տեսակետները զգալիորեն տարբերվում են հայ ավանդական քերականագիտական մոտեցումից: Գ. Զահուկյանը հին հայերենի համար տարբերակում է ձայնավորահանգ հիմքով և ձայնորդահանգ հիմքով հոլովումներ: Հետևաբար նա ընդունում է, որ հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ ձայնավորները հին հայերենում շարունակում են հիմքակազմիչ մասնիկների դեր կատարել՝ չնայած որ դրանք ընկել են ուղիղ հոլովներում (ուղղականում և հայցականում): Այսինքն՝ «ձայնավորահիմք հոլովումները բնութագրվում են ուղիղ հոլովներում զրո հիմքակազմ տարրով և թեք հոլովներում՝ ձայնավոր հիմքակազմ տարրով»⁵: Բայց միևնույն ժամանակ անվանի լեզվաբանը գտնում է, որ «սեռական-տրականի հիմքակազմ ձայնավորները փաստորեն գիտակցվում են նաև որպես վերջավորություններ»⁶: Է. Թումանյանը ևս հոլովիչները դիտում է իբրև հիմքային (թեմատիկ) ձայնավորներ, որոնք բառային հիմքից քերականական կամ բառափոխական հիմք են կազմում, իսկ վերջինիս ավելանում են համապատասխան (հիմնականում թեք հոլովների) թեքույթները: Ըստ այդմ՝ նա հիմքային ձայնավորները հետևողականորեն առանձնացնում է բուն հոլովական վերջավորություններից⁷: Այդուհանդերձ, Է. Թումանյանը դուրս չի գալիս ավանդական ներդրական կամ միջմասնիկավոր և վերջադրական կամ վերջամասնիկավոր եզրույթների ընդհանուր տրամաբանության շրջանակից: Ուստի թե՛ ձայնավորական և թե՛ բաղաձայնական հոլովական տիպերը ձևաբանական վերլուծության է ենթարկում նույն կերպ՝ երկու դեպքում էլ առանձնացնելով հիմքային ձայնավորներ (օրինակ՝ եզ. սեռ.-տր. գետ-ո-յ, անձ-ի-ն, դատ-ե-ր, հոգ. սեռ.-տր. գետ-ո-ց, գուսան-ա-ց, անձ-ա-ն-ց և այլն), և նշում, որ ձայնավորական և բաղաձայնական տիպերը համաժամանակյա տեսանկյունից միմյանցից տարբերվում են հիմքային ձայնավորի տեղակայման դիրքով⁸: Բայց նկատենք, որ ձայնավորական հոլովական տիպերի դեպքում հիմքակազմությունն իրականացվում է մասնիկավորմամբ, իսկ բաղաձայնական հոլովական տիպերի դեպքում՝ ներքին թեքմամբ: Մյուս կողմից՝ հայտնի է, որ

⁵ Գ. Զահուկյան. նշվ. աշխ., էջ 76:

⁶ Նույն տեղում, էջ 164: Հմմտ. նաև էջ 87:

⁷ Տե՛ս Ծ. Գ. Կումանյան. Древнеармянский язык. М., 1971, с. 177–201.

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 177–180, նաև՝ էջ 189–191: Գ. Կահան ևս հին հայերենի ձայնավորական և բաղաձայնական հոլովական տիպերը հավասարապես հատույթային ձևաբանական վերլուծության է ենթարկում: Սակայն վերջինս ելնում է այլ տեսանկյունից և, բացի այդ, հետևողական չէ՝ հիմքային ձայնավորները մասամբ դիտելով որպես հոլովական տիպերը որոշող դասային ցուցիչներ (Հմմտ. հոգ. սեռ.-տր.-բաց. ազգ-ա-ց, մաս-ա-ն-ց, հոգ. գործ. ազգ-ա-ւ-ք, մաս-ա-մ-բ-ք և այլն), մասամբ էլ՝ որպես հոլովական վերջավորություններ (Հմմտ. եզ. սեռ.-տր.-ներգ. ազգ-ի, մաս-ի-ն և այլն) [տե՛ս P. Caha. Classical Armenian declension. – Nordlyd, 2009, Vol. 36 (Special issue on Nanosyntax.), pp. 92–93, 101–106]:

ներքին թեքումը, ի տարբերություն մասնիկավորման, չի կարող հատույթային (սեգմենտային) ձևաբանական վերլուծության ենթարկվել, քանի որ ներքին թեքման հերթագայվող ձայնավորը հիմքի անբաժան մասն է կազմում⁹:

Ստորև ներկայացվող եվրոպացի հայերենագետները հին հայերենի հոլովման համակարգը դիտարկելիս սովորաբար առանձին հոլովիչ ձայնավորներ չեն տարբերակում՝ դրանք համարելով կա՛մ հիմքի, կա՛մ էլ վերջավորությունների բաղկացուցիչ մաս: Ընդ որում հաճախ հենց նույն հեղինակի մոտ որոշակի անհետևողականություն կամ երկվություն է նկատվում: Այսպես, Ա. Մեյեն հին հայերենի հոլովական վերջավորությունները նկարագրելիս նշում է միայն բուն վերջավորությունները (-ք, -ս, -ւ-ք, -ց, -ւք և այլն)¹⁰՝ առանց հիմքային ձայնավորների, իսկ բերվող հարացույցային օրինակներում վերջավորությունները հիմքից չի առանձնացնում¹⁰: Բայց միևնույն ժամանակ նա գտնում է, որ երբեմնի հիմքային ձայնավորները հին հայերենում այլևս չեն գիտակցվում որպես այդպիսին և վերջավորությունների բաղկացուցիչ մասն են կազմում: Ուստի իր մեկ այլ աշխատության մեջ Ա. Մեյեն հիմքային ձայնավորները բուն վերջավորությունների հետ որպես մեկ միասնական ձևաբանական տարր առանձնացնում է հոլովական հիմքից՝ -ոյ, -ով և այլն¹¹: Հ. Յենսենը նույնպես, ըստ էության, հիմքային ձայնավորը և բուն վերջավորությունը համաժամանակյա տեսանկյունից դիտում է որպես մեկ միասնական ձևաբանական տարր, իսկ հարացույցային օրինակներում վերջավորությունները բառահիմքից չի առանձնացնում¹²: Ջ. Քլեկսոնը իբրև հոլովական ցուցիչներ առանձնացնում է բուն վերջավորությունները (եզ. գործ.-w/-v/-b, հոգ. գործ.-wł/-vł/-bł, հոգ. ուղղ.-ł, հոգ. սեռ.-տր.-բաց.-ć և այլն) և նշում, որ գործիականի և հոգնակի սեռական-տրական-բացառականի հոլովական ցուցիչներին նախորդում է a (ա), i (ի), o (ո) կամ ow (ու) հիմքային ձայնավորը, բայց մյուս կողմից գործիական հոլովի կազմության կցական բնույթը ji (ձի) բառի օրինակով լուսաբանելիս եզ. գործ. ji-ov (ձի-ով) և հոգ. գործ. ji-ov-ł (ձի-ով-ք) ձևերում գործիական հոլովի ցուցիչ է համարում ov (ով)-ը, այսինքն՝ վերջավորությունը հիմքային ձայնավորի հետ միասին¹³: Ուստի այդ պարագայում այնքան էլ պարզ չէ՝ արդյոք նա բուն վերջավորություններին նախորդող a (ա), i (ի), o (ո), ow (ու) ձայնավորները իբրև հիմքային ձայնավորներ բնորոշելիս եղնում է տարաժամանակյա⁹, թե՞ հին հայերենի համաժամանակյա տեսանկյունից: Նույնպիսի անորոշություն և երկվություն է առկա նաև Յ. Քլայնի մոտ: Վերջինս նշում է, որ վերոհիշյալ բոլոր չորս ձայնավորական

Պատմալեզվաբանական հանրագիտություն 2021 № 1 Историко-филологический журнал

⁹ Տե՛ս M. Aronoff, K. Fudeman. What is Morphology?, 2nd ed. Wiley-Blackwell, 2011, pp. 16–17, 49–54.

¹⁰ Տե՛ս A. Meillet. Altarmenisches Elementarbuch. Heidelberg, 1913, S. 44–50.

¹¹ Տե՛ս A. Meillet. Esquisse..., p. 68, նաև՝ էջ 66-ի հարացույցային օրինակները:

¹² Տե՛ս H. Jensen. Altarmenische Grammatik. Heidelberg, 1959, S. 48 ff.

¹³ Տե՛ս J. P. T. Clackson. Classical Armenian. The Ancient Languages of Asia Minor. Cambridge University Press, 2008, Ch. 11, pp. 130–132.

կամ անփոփոխ հիմքով հոլովական տիպերի եզակի ու հոգնակի գործիակա-
նում և հոգնակի սեռական-տրական-բացառականում բուն վերջավորութ-
յունից առաջ հանդես է գալիս հիմքային ձայնավորը, մյուս կողմից՝
ընդունում է, որ նախագրային հայերենում հիմքային վանկերը (stem
syllables) վերաբերականացվել են՝ դառնալով հոլովական վերջավորություն-
ներ¹⁴: Յ. Մացինգերը ևս հետևողական չէ հոլովաձևերի համաժամանակյա
ձևաբանական վերլուծության և հնդեվրոպական հիմքային ձայնավորների
հինհայերենյան կարգավիճակի նկարագրման հարցում¹⁵: Իսկ Ռ. Գոդելի
կարծիքով, երբեմնի հիմքային ձայնավորները, որոնք հին հայերենում
հանդես են գալիս միայն թեք հոլովներում, վերաիմաստավորվել և վերջա-
վորությունների բաղկացուցիչ մասն են կազմում: Ուստի նա հետևողակա-
նորեն ձայնավորական կամ անփոփոխ հիմքով հոլովական տիպերի հիմքա-
յին ձայնավորները բուն վերջավորությունների հետ որպես մեկ միասնա-
կան ձևաբանական տարր առանձնացնում է հոլովական հիմքից¹⁶: Այդու-
հանդերձ, Ռ. Գոդելն անհետևողականություն է ցուցաբերում հոլովական
հիմքերը նկարագրելիս. նա ձայնավորական հոլովական տիպերի հարացույ-
ցում առանձնացնում է մեկ ընդհանուր և անփոփոխ հոլովական հիմք, որը
ձևով համընկնում է եզակի ուղղական-հայցականին, մինչդեռ բաղաձայ-
նական հոլովական տիպերի դեպքում նշում է, որ հարացույցային ձևերը
կազմվում են տարբեր հիմքերից, և համապատասխանաբար հիմքային
տարբերակներ է առանձնացնում¹⁷:

Մի նոր մեկնաբանություն փորձ

Կարծում ենք՝ ձևաբանական վերլուծության ընդհանուր սկզբունքնե-
րից¹⁸ ելնելով անհրաժեշտ է մեկից ավելի հոլովական հիմքեր (ուղիղ և թեք
հիմքային տարբերակներ) ընդունել հին հայերենի թե՛ բաղաձայնական և
թե՛ ձայնավորական հոլովական տիպերի համար (տե՛ս ստորև)¹⁹: Նշենք, որ
բազմահիմքություն է բնորոշ է աշխարհի մի շարք լեզուների հոլովական
համակարգերին: Հատկապես դադատանյան լեզուներն աչքի են ընկնում
բազմահիմքության և հոլովական հարացույցների կազմության տարատիպ
օրինաչափություններով: Ընդ որում՝ որպես բացարձակ կամ ուղղական հո-
լով հանդես եկող ուղիղ հիմքին հակադրվող թեք հիմքերը մասամբ գոր-

¹⁴ Տե՛ս J. Klein. Classical Armenian Morphology. Morphologies of Asia and Africa, Vol. 1. Winona Lake, Indiana, 2007, Ch. 37, pp. 1052–1053.

¹⁵ Հմմտ. J. Matzinger. Նշվ. աշխ., էջ 12, 14, 21:

¹⁶ Տե՛ս R. Godel. Նշվ. աշխ., էջ 93, նաև էջ 28–30-ի հոլովական հարա-
ցույցները:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 28–32:

¹⁸ Տե՛ս E. A. Nida. Morphology: The Descriptive Analysis of Words, 2nd ed., Ann Arbor. University of Michigan Press, 1949, M. Aronoff, K. Fudeman. Նշվ. աշխ., էջ 12–22:

¹⁹ Հմմտ. նաև В. А. Плу́нги́ян, Кс. П. Семёнова. К типологии древнеармянской именной парадигматики: Instr. Pl. – «Вопросы языкознания», 2016, № 5, с. 110–111; М. Е. Алексеев. Сравнительно-историческая морфология нахско-дагестанских языков. Категории имени. М., 2003, с. 34.

ծառում են միայն բուն հոլովական հիմքի արժեքով, մասամբ էլ ձևով համընկնում են այս կամ այն հոլովին (սովորաբար էրգատիվին կամ սեռականին), այսինքն թեք հիմքերը երկակի (հոլովական հիմքի և հոլովաձևի) դեր են կատարում: Թեք հիմքերը հիմնականում կազմվում են ուղիղ հիմքին մասնիկների ավելացմամբ, երբեմն էլ՝ ուղիղ հիմքի ձևահանգում: Իսկ թեք հոլովները ընդհանուր առմամբ կազմվում են թեք հիմք(եր)ից, բայց մասամբ էլ՝ անմիջականորեն ուղիղ հիմքից²⁰:

Ըստ այդմ հին հայերենի հոլովական հարացույցները կարելի է ընդհանրացված բնութագրել հետևյալ կերպ: Զայնավորական հիմքով պարզ հոլովումներին բնորոշ է երկու (մեկ ուղիղ և մեկ թեք), իսկ խառն հոլովումներին՝ երեք (մեկ ուղիղ և երկու թեք) հիմքային տարբերակ. համտ. մի կողմից՝ եզ. ուղղ.-հայց. բան-Յ, հոգ. ուղղ. բան-ք, հոգ. հայց. բան-ս, եզ. սեռ.-տր. բան-ի-Յ, եզ. գործ. բան-ի-ւ, հոգ. սեռ.-տր.-բաց. բան-ի-ց, հոգ. գործ. բան-ի-ւ-ք, եզ. ուղղ.-հայց. գետ-Յ, հոգ. ուղղ. գետ-ք, հոգ. հայց. գետ-ս, եզ. սեռ.-տր. գետ-ո-յ, եզ. գործ. գետ-ո-վ, հոգ. սեռ.-տր.-բաց. գետ-ո-ց, հոգ. գործ. գետ-ո-վ-ք ևն (ուղիղ բան-, գետ- և թեք բան-ի-, գետ-ո- հիմքերով), մյուս կողմից՝ եզ. ուղղ.-հայց. քաղաք-Յ, հոգ. ուղղ. քաղաք-ք, հոգ. հայց. քաղաք-ս, եզ. սեռ.-տր. քաղաք-ի-Յ, եզ. գործ. քաղաք-ա-ւ, հոգ. սեռ.-տր.-բաց. քաղաք-ա-ց, հոգ. գործ. քաղաք-ա-ւ-ք և այլն (ուղիղ քաղաք- և թեք քաղաք-ի-, քաղաք-ա- հիմքերով): Թեք քաղաք-ի- թեք հիմքը փաստացիորեն հանդես է գալիս միայն եզակի սեռական-տրականում, այդուհանդերձ, ի-ն դարձյալ պետք է դիտել իբրև հիմքակազմիչ մասնիկ, այլ ոչ թե եզակի սեռական-տրականի վերջավորություն: Կարծում ենք՝ այդօրինակ ձևաբանական վերլուծությունն արդարացված է երկու առումով: Նախ՝ որոշ հոլովական տիպերի դեպքում եզակի սեռական-տրականը մյուս թեք հոլովների նման հիմքակազմիչ մասնիկից հետո հատուկ հոլովական վերջավորություն ունի (համտ. եզ. սեռ.-տր. գետ-ո-յ)²¹: Եվ ապա՝ հոլովական տարբեր տիպերի ձևաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ հին հայերենի հոլովակազմության ընդհանուր սկզբունքի համաձայն՝ ձայնավորական հիմքով հոլովական տիպերի եզակի սեռական-տրականը, եզակի ու հոգնակի գործիականը և հոգնակի սեռական-տրական-բացառականը, որպես կանոն, բնութագրվում են ուղիղ հիմքին անմիջականորեն ավելացող թեք հիմքակազմիչ ձայնավորի առկայությամբ (իսկ վերջինիս հաջորդում են բուն վերջավորությ-

²⁰ Տե՛ս M. Daniel and D. Ganenkov. Case Marking in Daghestanian: Limits of Elaboration, In: A. Malchukov, A. Spencer (eds.).– The Oxford Handbook of Case. Oxford University Press, 2008, Ch. 46, pp. 668–685, M. E. Алексеев. Նշվ. աշխ., էջ 30–82:

²¹ Բառավերջի յ-ն, որը նախագրային հայերենում ընկել էր ի և ու ձայնավորներին հաջորդող դիրքում (իսկ ա-ից հետո յ-ի առկայության հարցում հին ձևագրերում հաճախ տատանումներ են նկատվում), ո-ին հաջորդող դիրքում դեռ օրինաչափ կերպով պահպանվում է դասական հայերենում V դ. գրաբարում (տե՛ս A. Meillet. Esquisse..., p. 57), և համեմատաբար ավելի ուշ (VI–VII դդ.) է ո-ից հետո ևս յ-ի անկում արձանագրվում (տե՛ս Հ. Մուրադյան. Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I. Հնչյունաբանություն, Երևան, 1982, էջ 64):

յունները, այդ թվում՝ գրոյական): Ըստ այդմ՝ թե՛ եզ. սեռ.-տր. բան-ի-Յ և թե՛ եզ. սեռ.-տր. քաղաք-ի-Յ ձևերում գործ ունենք միևնույն հիմքակազմիչ Կ-մասնիկի հետ, իսկ եզակի սեռական-տրականի իմաստը երկու դեպքում էլ արտահայտվում է գրոյական վերջավորությունում: Ինչ վերաբերում է բաղաձայնական հիմքով հոլովական տիպերին, վերջիններս դրսևորում են երկու (դուստր-/դատեր-), երեք (անձն-/անձին-/անձան-, ձուկն-/ձկան-/ձկուն-) և չորս (հարսն-/հարսին-/հարսան-/հարսուն-) հիմքային տարբերակ: Ի դեպ, հին հայերենում հոլովական տարբեր տիպերի առկայությունը պայմանավորված է ոչ այնքան հոլովական վերջավորությունների բազմազանությամբ, որքան հոլովական հիմքերի կազմության և հիմքային տարբերակների փոխհարաբերության տարատիպ օրինաչափություններով²²:

Ինչպես արդեն նշվեց, ձևաբանական վերլուծության գիտական սկզբունքները պահանջում են հին հայերենի ձայնավորական հոլովական տիպերի հիմքային ձայնավորները դիտել իբրև թեք հիմքակազմիչ մասնիկներ (այդ թվում՝ եզ. սեռ.-տր. սրտ-ի-Յ, քաղաք-ի-Յ, ծով-ու-Յ և նման ձևերում): Այդուհանդերձ, այդ ձայնավորների բացակայությունը ոչ միայն եզակի ուղղական-հայցականում, այլև որոշ թեք հոլովներում (Հմմտ. եզ. բաց. սրտ-է, ծով-է, քաղաք-է, եզ. ներգ. հն-ում, առաջն-ում և այլն) նկատելիորեն խախտում էր նրանց՝ իբրև հիմքակազմիչ մասնիկների կարգավիճակը՝ նպաստելով խոսողների կողմից այդ ձայնավորների և բուն վերջավորությունների կապակցությունների որպես միասնական կազմիչներ գիտակցվելուն: Եվ արդեն միջին հայերենում նախկին հիմքակազմիչ ձայնավորները լիովին հոլովական վերջավորությունների կարգավիճակ են ձեռք բերում մասամբ ինքնուրույնաբար, մասամբ էլ՝ բուն վերջավորություններին ձուլմամբ: Ի տարբերություն հին հայերենի, որտեղ հիմքակազմիչ ձայնավորները հետևողականորեն հանդես էին գալիս գրեթե բոլոր թեք հոլովներում, միջին հայերենում այդ դրույթները խախտվում է գործիականի -ով (մասամբ էլ՝ բացառականի -է) վերջավորության ընդհանրացմամբ: Արդ, հաճախ «հոլովման ընթացքում յուրաքանչյուր հոլով հանդես է բերում վերջավորության միայն իրեն հատուկ ձայնավորում ...: Ստեղծվում է մի այնպիսի վիճակ, երբ հոլովումների դասակարգումը ըստ առանձին տիպերի հնարավոր է միայն սեռական-տրական հոլովաձևերի հիման վրա»²³: Ընդ որում՝ հիմքակազմիչ ձայնավորների վերածվելը հոլովական ցուցիչների և, մյուս կողմից, ներքին թեքման սահմանափակումը (սկզբնապես բաղաձայնական հոլովական տիպին պատկանող բազմաթիվ բառերի՝ ձայնավորական հոլովական տիպին անցմամբ²⁴) իրենց հերթին հանգեցնում են նախկին հոլովական հիմքային տարբերակների մեծ մասի վերացմանը և ներհարացույցային բազմահիմքության սահմանափակմանը, որն արդի հայերենում առկա է միայն որոշ հոլովական տիպերի դեպքում. օրինակ՝ օր-օրվան- (Հմմտ. եզ. բաց. օր-վան-ից, օր-ից, եզ. գործ. օր-ով, հոգ. սեռ.-տր. օր-

²² Տե՛ս Յ. Գ. Туманян. Նշվ. աշխ., էջ 177–179:

²³ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. 2, Երևան, 1975, էջ 8:

²⁴ Հմմտ. նույն տեղում, էջ 16:

եր-ի), հայր-/հոր- (հմմտ. եզ. բաց. հոր-ից, եզ. գործ. հոր-ով, հոգ. ուղղ. հայր- եր, հոգ. սեռ.-տր. հայր-եր-ի), ընկեր-/ընկեր-ոջ- (հմմտ. եզ. բաց. ընկեր-ոջ-ից, եզ. գործ. ընկեր-ոջ-ով, հոգ. սեռ.-տր. ընկեր-ներ-ի և այլն):

Եզրակացություն

Այսպիսով կատարված քննությունն արդյունքները կարող ենք ամփոփել հետևյալ կերպ: Նախագրային հայերենում շեշտահաջորդ վերջնավանկերի սղման գործընթացում հիմքի վերջահանգ ձայնավորները եզակի ուղղակա- նում և հայցականում ընկել են բուն թեքությունների հետ միասին, բայց պահ- պանվել են թեք հոլովներում (մասամբ օրինաչափ հնչյունական զարգաց- ման, մասամբ էլ համաբանական-ձևաբանական փոփոխությունների շնոր- հիվ), այնպես որ եզակի ուղղական-հայցականը հին հայերենում իբրև ուղիղ հոլովական հիմք և ելակետային ձև է ծառայում թեք հոլովական հիմք(եր)ի և մնացած հոլովների կազմության համար: Այդ ամենի հետևանքով հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ ձայնավորները, որոնք սկզբնապես հանդես էին գալիս բոլոր հոլովներում, հին հայերենում վերա- իմաստավորվել և դարձել են թեք հիմքակազմիչ մասնիկներ: Բայց այն հանգամանքը, որ հիմքակազմիչ ձայնավորները հին հայերենում բացա- կայում էին ոչ միայն եզակի ուղղական-հայցականում, այլև որոշ թեք հոլով- ներում, անխուսափելիորեն պետք է նպաստեր խոսողների կողմից այդ ձայ- նավորների ու բուն վերջավորությունների կապակցությունների իբրև միաս- նական կազմիչներ գիտակցվելուն: Եվ արդեն միջին հայերենում նախկին հիմքակազմիչ ձայնավորները լիովին հոլովական վերջավորությունների կարգավիճակ են ձեռք բերել մասամբ ինքնուրույնաբար, մասամբ էլ բուն վերջավորություններին ձուլմամբ: Ընդ որում հիմքակազմիչ ձայնավորների վերածվելը հոլովական ցուցիչների հանգեցրել է նախկին հոլովական հիմ- քային տարբերակների մեծ մասի վերացմանը և ներհարացույցային բազ- մահիմքության խիստ սահմանափակմանը:

Սարգիս Ավետյան – Բ. Գ. Թ., ԵՊՀ ընդհանուր լեզվաբանություն ամ- բիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հնդեվրոպական լեզ- վաբանություն, լեզվաբանական տիպաբանություն, հին հայերեն, հայոց լեզվի պատմություն, հայերենի բարբառներ: Հեղինակ է 1 մենագրու- թյան և շուրջ 30 հոդվածի: sargisavetyan@ysu.am

REFERENCES

Abrahamyan A. Grabari dzernak, Yerevan, 1976 (In Armenian).
 Avetisyan H, Ghazaryan R. Grabari dzernak, Yerevan, 2007 (In Armenian).
 Alekseev M. E. Sravnitel'no-istoricheskaya morfologiya nakhsko-dagestanskikh yazykov. Kategorii imeni. M., 2003 (In Russian).
 Aknarkner midjin grakan heyereni patmutyan, h. 2, Yerevan, 1975 (In Armenian).
 Bagratuni A. Hayeren kerakanutiun i pets zargatselots, Venetik, 1852 (In Armenian).
 Djahukyan G. Hin hayereni holovman sisteme yev nra dsagume, Yerevan, 1959 (In Armenian).

- Muradyan H. Hayots lezvi patmakan kerakanutyun, h. I, Hnchyunabanutyun, Yerevan, 1982 (In Armenian).
- Plungyan V. A., Semenova Ks. P. K tipologii drevnearmyanskoi imennoy paradigmatici: Instr. Pl. – “Voprosy yazykoznaniiya”, 2016, № 5 (In Russian).
- Tumanyan E. G. Drevnearmyanskii yazyk. M., 1971 (In Russian).

МОРФОЛОГИЧЕСКИЙ СТАТУС КОНЕЧНЫХ ГЛАСНЫХ ИНДОЕВРОПЕЙСКИХ ИМЕННЫХ ОСНОВ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

САРГИС АВЕТЯН

Резюме

Ключевые слова: конечные гласные индоевропейских именных основ, показатели косвенных основ, косвенные падежи, именное склонение, падежные окончания, древнеармянский язык, среднеармянский язык, предпоследний слог, динамическое (силовое) ударение, принципы морфологического анализа, номинатив, аккузатив.

Морфологический статус конечных гласных индоевропейских именных основ в древнеармянском языке характеризуется и интерпретируется разными исследователями по-разному. Данные вокалические элементы следует считать показателями косвенных основ в древнеармянском именном склонении согласно принципам морфологического анализа. Иначе говоря, установление динамического (силового) ударения в додревнеармянский период на предпоследнем слоге, вызвавшее выпадение послелогических гласных, имело также важное морфологическое последствие: в результате выпадения конечных гласных индоевропейских именных основ в номинативе и аккузативе и их сохранения в косвенных падежах (отчасти обусловленного аналогическими изменениями), эти вокалические элементы стали выполнять функцию показателей косвенных основ. Конечно, отсутствие последних не только в номинативе и аккузативе, но также в некоторых косвенных падежах (ср. аблатив ед. ч. *ւրտ-է, ծով-է, քաղաք-է*, локатив ед. ч. *հն-ու՛մ, ավազան-ու՛մ* и т. д.) могло способствовать восприятию этих гласных говорящими в качестве падежных окончаний или неотъемлемой части окончаний. На самом деле, в среднеармянском языке эти вокалические элементы в конце концов слились с собственными окончаниями или превратились в падежные окончания самостоятельно.

Саргис Аветян – к. филол. н., доцент кафедры общего языкознания ЕГУ. Научные интересы: индоевропейское языкознание, лингвистическая типо-

логия, древнеармянский язык, история армянского языка, армянские диалекты. Автор 1 монографии и около 30 статей. sargisavetyan@ysu.am

THE MORPHOLOGICAL STATUS OF THE STEM-FINAL VOWELS
OF INDO-EUROPEAN NOMINAL STEMS IN
OLD ARMENIAN

SARGIS AVETYAN

S u m m a r y

Key words: the stem-final vowels of Indo-European nominal stems, oblique-stem markers, oblique cases, penultimate syllable, intensity accent, Old Armenian, Middle Armenian, the principles of morphological analysis, nominal declension, case endings, nominative, accusative.

The morphological status of the stem-final vowels of Indo-European nominal stems in Old Armenian is characterized and interpreted differently by different scholars. According to the principles of morphological analysis, the vocalic elements should be regarded as oblique-stem markers in Old Armenian nominal declension. To put it another way, the fixation of an intensity accent on the prehistoric penultimate syllable in Armenian, which entailed the dropping of the posttonic vocalic elements, had an important morphological consequence as well: the stem-final vowels of Indo-European nominal stems were lost in the nominative and accusative, while having been retained in the oblique cases (partly due to analogical changes); as a result, the vocalic elements took on the function of oblique-stem markers. Of course, the absence of the latter not only in the the nominative and accusative but also in some oblique cases (cf. abl. sing. սրտ-է, ծով-է, քաղաք-է, loc. sing. հն-ում, առաջն-ում etc.), could contribute to the vocalic elements being conceived of as case endings or an inseparable part of endings by speakers. As a matter of fact, the vocalic elements eventually merged with the endings proper or they became case endings on their own in Middle Armenian.

Sargis Avetyan – Candidate of Sciences in Philology, Associate Professor of the YSU Chair of General Linguistics. Scientific interests: Indo-European Linguistics, Linguistic Typology, Old Armenian, History of the Armenian language, Armenian dialects. Author of 1 monograph and more than 30 articles. sargisavetyan@ysu.am